



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հունվարի 2013 թվականի N 18 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1283-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի «Հանրապետական գործադիր մարմինների կողմից բարդ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգերով տրվող լիցենզիաներ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 1283-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման վերնագիրը «ներկայացնելու» բառից հետո լրացնել «ինչպես նաև լիցենզավորված անձանց կողմից հաշվետվությունների՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման» բառերով.

2) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ ենթակետով.

«5) լիցենզավորված անձանց կողմից հաշվետվությունների՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի».

3) որոշումը լրացնել նոր N 5 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հունվարի 17  
Երևան



Հավելված  
ՀՀ կառավարության 2013 թվականի  
հունվարի 10-ի N 18 -Ն որոշման

<<Հավելված N 5  
ՀՀ կառավարության 2010 թվականի  
սեպտեմբերի 24 N 1283-Ն որոշման

#### Կ Ա Ր Գ

#### ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են լիցենզավորված անձանց կողմից «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով սահմանված հաշվետվությունների (այսուհետ՝ հաշվետվություններ)՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման հետ կապված հարաբերությունները:

2. Լիցենզավորված անձինք հաշվետվությունները կարող են ներկայացնել էլեկտրոնային համակարգով հետևյալ հասցեով՝ [www.e-gov.am/licenses-reports](http://www.e-gov.am/licenses-reports):

3. Լիցենզավորված անձինք հաշվետվություններն էլեկտրոնային համակարգով ներկայացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներին և պարբերականությանը համապատասխան:

4. Լիցենզավորված անձը հաշվետվությունների լրացման նպատակով [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի «Լիցենզավորված անձանց հաշվետվությունների ընդունման համակարգ» բաժնում ընտրում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, լիցենզավորված անձի տեսակը և հաշվետվության անվանումը, այսուհետև լրացնում համապատասխան տեղեկատվական դաշտերը և կցում հաշվետվությունը (XLS կամ XLSX ֆորմատների ֆայլերի տեսքով), որը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստորագրված է  
Էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

5. Հաշվետվությունը լիցենզավորող մարմնում մուտքագրված լինելու փաստը  
հավաստվում է նույն աշխատանքային օրվա ընթացքում հետադարձ ծանուցմամբ, որը  
պարունակում է 12-սիշանոց ծածկագիր: Լիցենզավորված անձը հաշվետվության ընթացքին  
կարող է հետևել նշված 12-սիշանոց ծածկագրով համակարգ մուտք գործելու միջոցով:

6. Ներկայացված հաշվետվությունների ստուգման արդյունքում սահմանված ձևերին  
անհամապատասխանություններ, անճշտություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում  
լիցենզավորող մարմինը դրա մասին հաշվետվությունը մուտքագրվելուց հետո 15-օրյա  
ժամկետում տեղեկացնում է լիցենզավորված անձին այն էլեկտրոնային փոստի հասցեով և  
(կամ) հեռախոսահամարի միջոցով, որը նշված է էլեկտրոնային համակարգում: Տեղեկաց-  
վելուց հետո հնգօրյա ժամկետում թերությունները վերացնելու և սույն կարգով սահմանված  
ընթացակարգին համապատասխան հաշվետվությունը կրկին ներկայացնելու դեպքում այն  
համարվում է ներկայացված էլեկտրոնային համակարգով սկզբնական ներկայացման օրը: >>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

